**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

---

«23» օգոստոսի 2023թ. N 06-Ն

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ԳԾՈՎ ՇՆՈՐՀՎՈՂ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇՆՈՐՀՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել.
1) քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը և մասնակցությանը ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելված 1-ի,
2) քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացման յուրաքանչյուր տեսակի գծով շնորհվող ՇՄԶ կրեդիտների քանակը և դրանց շնորհման չափորոշիչները՝ համաձայն հավելված 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի նոյեմբերի 17-ից:

8/23/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

**Հավելված 1**
**ՀՀ քաղաքաշինության**
**կոմիտեի նախագահի**
**2023 թ. փետրվարի 23-ի N 06-Ն**
**հրամանի**

# ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչները կարգավորում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը և մասնակցությանը վերաբերող հարաբերությունները:

2. Սույն չափորոշիչները տարածվում են քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց մասնագիտական կարողությունների, ունակությունների և հմտությունների զարգացման անընդհատությունն ապահովող գործընթաց իրականացնող և ծառայություններ մատուցող օրենքով սահմանված տնտեսվարող սուբյեկտների վրա:

3. Սույն չափորոշիչներում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառում** (այսուհետ՝ **Միջոցառում**)՝ քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց մասնագիտական կարողությունների, ունակությունների և հմտությունների զարգացման նպատակով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված շարունակական մասնագիտական զարգացման հնգամյա ժամանակացույցին համապատասխան, ուսումնառության կազմակերպման և իրականացման գործընթաց,

2) **էլեկտրոնային ուսուցում** (այսուհետ՝ **E-ուսուցում**)՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ մշակված շարունակական մասնագիտական զարգացում (այսուհետ՝ **ՇՄԶ**) ապահովող ուսուցման գործընթաց նախատեսող միջոցառում է, որն իրականացվում և ստուգվում է հեռավար տարբերակով՝ էլեկտրոնային ուսուցման մոդուլների միջոցով,

3) **ուսուցողական նյութ**՝ դասավանդման ընթացքում ապացուցողական հենք ունեցող, ապացուցողական քաղաքաշինական գործունեության ժամանակակից մոտեցումներին համահունչ տեղեկատվություն,

4) **էլեկտրոնային ուսուցման մոդուլ** (այսուհետ՝ **E-ուսուցման մոդուլ**)՝ էլեկտրոնային ուսուցողական նյութերի ավարտուն միավորում, որը համապատասխանում է էլեկտրոնային ուսուցողական նյութերի կրեդիտավորմանը ներկայացվող պահանջներին,

5) **հեռավար կամ առցանց ուսուցում**՝ համակարգված ուսուցման ձև է, որի դեպքում մասնագետը չի հաճախում կրթական հաստատություն, անմիջական և ոչ անմիջական կրթության

գործընթացը կազմակերպվում է հեռահաղորդակցման և տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով,

6) **խառը ուսուցում**՝ Միջոցառում, որը իր մեջ ներառում է ՇՄԶ-ն ապահովող ուսուցման բոլոր ձևերը,

7) **ուսուցման ակտիվ մեթոդներ**՝ մասնակցի մտավոր և պրակտիկ գործունեության ակտիվությունը և բազմազանությունը ապահովող եղանակներ՝ հիմնված գիտելիքների և հմտությունների ձեռքբերման պրոցեսում բոլոր իմացական գործընթացների (հիշողություն, երևակայություն, մտապատկեր և այլն) ընդգրկման վրա,

8) **շարունակական մասնագիտական զարգացման միջոցառման արդյունք** - գիտելիք, հմտություն և կարողություն, որոնք ձեռք կբերի Միջոցառումը հաջողությամբ ավարտած անձը,

9) **շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտ** (այսուհետ՝ **ՇՄԶ կրեդիտ**)՝ ՇՄԶ գործընթացի՝ բեռնվածության չափման ժամաքանակով արտահայտված պայմանական միավոր, որը կարող է շնորհվել տեսական կամ ինքնակրթության և գործնական կամ մասնագիտական աշխատանքային ստաժ կրեդիտի ձևով,

10) **դասավանդող**՝ Միջոցառման շրջանակներում դասավանդող կամ դասընթացը վարող մասնագետ,

11) **միջոցառման կազմակերպիչ** (այսուհետ՝ **Կազմակերպիչ**)՝ «Քաղաքաշինության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) 11.3-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կազմակերպություններ, ովքեր պատասխանատու են միջոցառման կազմակերպման, ծրագրային ուսուցողական նյութերի բովանդակային ընտրության և պատրաստման, պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության համար,

12) **մասնակից**՝ մասնագետ, ով ՇՄԶ-ի նպատակով իրականացնում է կրթական գործունեություն,

13) **նույնական Միջոցառում**՝ ՇՄԶ-ն ապահովող, արդեն իսկ կրեդիտավորված միջոցառման էական հատկանիշներ (բովանդակություն, ծրագիր, կազմակերպիչ, դասավանդողներ) ունեցող Միջոցառում,

14) **մասնագետ՝** սույն հրամանի N1 աղյուսակով սահմանված հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտության հավակնություն ունեցող անձ, որն ունի Հայաստանի Հանրապետությունում բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում համապատասխան կրթական աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով:

15) **Որակավորման հանձնաժողով**՝ «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-431-Ն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ **Կոմիտե**) կողմից հաստատված մասնագիտական որակավորման հանձնաժողով:

## 2. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4. Միջոցառման կազմակերպման ընդհանուր սկզբունքներն են՝

**1) տրամադրվող կրթության օբյեկտիվությունը և անկողմնակալությունը.**

ա. տրամադրվող կրթությունը չպետք է պարունակի գովազդի ցանկացած տեսակ և պետք է հիմնված լինի որոշակի շինարարական նյութի, արտադրանքի կամ տեխնոլոգիաների արդյունավետության իրական ապացուցողական հենքի վրա,

բ. կրեդիտավորման ենթակա չեն շինարարական նյութերի և (կամ) շինարարական տեխնիկայի և (կամ) շինարարական արտադրատեսակի բնութագրմանը հատկացված ժամաքանակները,

**2) մասնագիտական զարգացման կարիքների չափելիությունը և մասնագիտական զարգացման նյութերի պատշաճ լինելը.**

ա. Միջոցառման անցկացումից առաջ պետք է իրականացնել մասնագիտական զարգացման կարիքի վերհանում,

բ. մասնագիտական զարգացման կարիքները և արդյունքները պետք է լինեն սահմանված և չափելի,

**3) շահերի բախումը և բախման հնարավոր լուծումների ապահովում.**

ա. ծրագրային նյութերի, այդ թվում՝ Է-ուսուցման համար պատասխանատու մասնագետները, հեռավար կամ առցանց դասընթացը վարող մասնագետը պետք է ներկայացնեն շահերի բախման հայտարարագիր՝ համաձայն Ձև N 3-ի: Օտարերկրյա անձանց կողմից շահերի բախման հայտարարագիրը կարող է ներկայացվել այլ ձևաչափով՝ սույն կարգով հաստատված շահերի բախման հայտարարագրի բովանդակային մասի ապահովմամբ,

բ. շահերի բախման յուրաքանչյուր դեպք պետք է լուծել մինչև Միջոցառման անցկացումը,

**4) մասնակիցների ներգրավվածության և հետադարձ կապի ապահովումը.**

ա. մասնակիցների մասնակցության մշտադիտարկում,

բ. Կազմակերպչի կողմից մասնակիցների հետ հետադարձ կապի հնարավորության և մասնակցության վերաբերյալ Կոմիտե հաշվետվության ներկայացում,

**5) Միջոցառման որակի ապահովում և հսկողություն.**

ա. **Կոմիտեի** համապատասխան ստորաբաժանման կողմից կրեդիտավորված Միջոցառման մշտադիտարկում՝ պատահականության սկզբունքով:

## 3. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

5. Կազմակերպիչը՝ Միջոցառման անցկացումից առնվազն 30 աշխատանքային օր առաջ Կոմիտե է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) Կոմիտեի նախագահի անունով ՇՄՁ միջոցառման կրեդիտավորման հայտ՝ համաձայն Ձև N 1-ի, որը պետք է հասանելի լինի Կոմիտեի՝ www.minurban.am պաշտոնական կայքում: Մեկ հայտով դիտարկվում է միայն մեկ ՇՄՁ միջոցառում,

2) Միջոցառման ծրագիրը (այսուհետ՝ **Ծրագիր**), որտեղ Կազմակերպիչը ներկայացնում է՝

ա. շարունակական մասնագիտական զարգացման կարիքները, որոնց բավարարմանը միտված է տվյալ Միջոցառումը: Այդ նպատակով Միջոցառման կազմակերպիչն իրականացնում է ՇՄՁ կարիքների վերհանում և գնահատում, նկարագրում է, թե ինչպես է այն կատարվել և, համապատասխանաբար, ինչ կարիքներ են ձևակերպվել: Կարիքները գնահատելիս կարող են կիրառվել հետևյալ եղանակները՝ նախորդ Միջոցառման (միջոցառումների) արդյունքների գնահատում, հարցում հավանական մասնակիցների շրջանում, նոր նորմատիվատեխնիկական փաստաթղթերի կամ գործելակարգի կամ գիտական հետազոտության հրատարակում, քաղաքաշինության ոլորտը կանոնակարգող և հարակից օրենսդրական փոփոխությունների արդյունքների գնահատում: Կարիքը կարող է ներկայացվել առկա իրավիճակի բարելավման կամ թերությունների վերացման անհրաժեշտության ձևով,

բ. թիրախային լսարանի վերաբերյալ տեղեկություն՝ ըստ մասնակիցների գործունեության տեսակների, ենթատեսակների, մասնագիտությունների և աշխատանքային ստաժի (անհրաժեշտության դեպքում),

գ. Միջոցառման անվանումը, որտեղ հովանավորների կամ նրանց առևտրային ապրանքների անվանումների առկայությունն անթույլատրելի է,

դ. Միջոցառման անցկացման վայրը, սկիզբը և ավարտը (ներառյալ սուրճի/ճաշի ընդմիջումները), ուսուցման ժամերի քանակը՝ յուրաքանչյուր օրվա և ողջ Միջոցառման համար: Ընդ որում, կրեդիտավորման ենթակա են բացառապես ուսուցողական ժամերը,

ե. Միջոցառման բովանդակության հստակ նկարագիրը, անցկացման ձևը, Միջոցառման բնույթի հստակ նկարագիրը (գիտաժողով, համագումար, կոնֆերանս, դասախոսություն, սեմինար, վարպետաց դաս, վեբինար, Է-ուսուցում, այլ (որը հայտատուն հայտում պետք է հստակեցնի), անցկացման ձևը՝ եզակի կամ բազմակի, դրանց թիվը,

զ. ակնկալվող ՇՄԶ արդյունքը, որը Միջոցառման ավարտին պետք է ստանա մասնակիցը՝ գիտելիքի, հմտությունների և կարողությունների նշումով,

է. Միջոցառմանը մասնակցի բավարար ներգրավվածությունը ապահովող մեխանիզմները՝ սահմանված ՇՄԶ արդյունքներին հասնելու նպատակով,

ը. Միջոցառման ծրագրային նյութերի բովանդակության և որակի համար պատասխանատու անձի (անձանց) կողմից տրված եզրակացությունը, սկզբնաղբյուրների ցանկը և/կամ հղումները, որոնք օգտագործվել են ծրագրային նյութերը պատրաստելիս (պահանջի դեպքում), ինչպես նաև դասախոսությունների սեղմագրերը (պահանջի դեպքում),

թ. Միջոցառմամբ ներկայացվում է ապացուցողական հենք, որը պետք է պարունակի մասնագիտական նորույթ, անդրադառնա քաղաքաշինության արդի մոտեցումներին, ներկայացնի նոր մեթոդներ, տվյալներ, առաջարկներ, վերլուծություններ և պարունակի հղումներ համապատասխան գիտական հետազոտություններին (գիտական հանդեսում/ամսագրում հրատարակման համար սահմանված չափանիշներին համապատասխան),

3) դասավանդողների անվանական ցանկը, ինքնակենսագրությունները, հրատարակված հոդվածների, գիտական աշխատանքների ցանկը,

4) շահերի բախման հայտարարագիր՝ դասավանդողի կողմից (հեղինակային դասընթացների դեպքում)՝ համաձայն Ձև N3-ի,

5) տեղեկատվություն Միջոցառման հովանավորների (ֆինանսավորման աղբյուրների) վերաբերյալ: Հովանավորությունը չպետք է ազդի Միջոցառման շրջանակներում տրամադրվող տեղեկատվության օբյեկտիվության, թեմաների և (կամ) դասախոսական կազմի ընտրության վրա: Ընդունելի է բոլոր հովանավորների հիշատակումը գիտական ծրագրի առանձին բաժնում՝ Միջոցառման կազմակերպման համար շնորհակալության հայտնումով և հովանավորության հստակ նշումով:

6) Միջոցառման մասնակիցներին տրվող վկայականի ձևանմուշը (Ձև N 4):

6. Անհրաժեշտությունից ելնելով՝ Կոմիտեն կարող է պահանջել նաև այլ փաստաթղթեր:

7. Սույն հավելվածի 5-րդ կետով սահմանված փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով կամ կից թարգմանությամբ, որի հավաստիության համար պատասխանատվությունը կրում է հայտատուն:

8. Ծրագրի վերջնական տարբերակը պետք է ներկայացնել Միջոցառման իրականացման նախատեսվող ժամկետից առնվազն 7 օր առաջ: Ընդ որում, կատարված ծրագրային փոփոխություններն անհրաժեշտ է ընդգծել: Կրեդիտավորման հաստատումից հետո ծրագրում չի թույլատրվում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հայտագրված դասավանդողի (ների) փոփոխություն, եթե վերջինս գրավոր համաձայնեցված չէ Կոմիտեի հետ,

2) Միջոցառման անցկացման վայրի փոփոխություն, եթե նշված փոփոխությունը գրավոր համաձայնեցված չէ Կոմիտեի հետ:

9. Սույն հավելվածի 8-րդ կետով սահմանված պայմաններից որևէ մեկի խախտման, ինչպես նաև ուսուցողական նյութերին կցված գովազդի առկայության դեպքում Միջոցառման մասնակիցների վկայականները Կոմիտեի կողմից չեն վավերացվում:

10. Ներկայացվող մեկ հայտով կարող են կրեդիտավորվել երկու տարվա ընթացքում տեղի ունեցող նույնական Միջոցառումները: Միջոցառման ժամկետի ավարտից հետո ներկայացվում է նոր հայտ: Կրկնակի հայտերի մուտքագրման դեպքում դիտարկման ենթակա է դրանցից վերջինը:

11. Սույն հավելվածի 5-րդ կետում նշված փաստաթղթերը հայտատուի հայեցողությամբ Կոմիտե կարող են ներկայացվել առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային կապի միջոցներով կամ էլեկտրոնային եղանակով՝ առցանց ծառայության միջոցով:

12. Կոմիտեն սույն հավելվածի 5-րդ կետով նախատեսված փաստաթղթերն ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում հայտը բավարարում կամ մերժում է:

13. Կրեդիտավորման հայտը մերժվում է, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն հավելվածով սահմանված պահանջներին կամ սույն հավելվածի 14-րդ կետով սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված թերությունները,

2) ներկայացված փաստաթղթերը ակնհայտ կեղծ են կամ խեղաթյուրված,

3) պարունակում են ուսուցողական նյութի հետ անմիջականորեն կապված որևէ շինարարական նյութի, շինտեխնիկայի, ծառայության կամ ընկերության գովազդ:

14. Ներկայացված փաստաթղթերի ոչ ամբողջական կամ թերի լինելու դեպքում Կոմիտեն հայտն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին պատշաճ ծանուցում է հայտատուին և առաջարկում յոթ աշխատանքային օրվա ընթացքում կատարել ներկայացված փաթեթում շտկումներ: Սույն կետով սահմանված ժամկետը չի հաշվարկվում սույն հավելվածի 12-րդ կետով սահմանված ժամկետի մեջ:

15. Կոմիտե ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա ընդունվում է Միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման կամ հայտի մերժման վերաբերյալ Կոմիտեի նախագահի հրաման: Ընդ որում, հայտի մերժման վերաբերյալ Կոմիտեի նախագահի հրամանը պետք է լինի հիմնավորված:

16. ՇՄԶ շրջանակներում կրեդիտավորման ենթակա Միջոցառումների ծրագրի վերաբերյալ եզրակացության տրամադրման նպատակով ծրագիրը ներկայացվում է Որակավորման հանձնաժողովին հետևյալ դեպքերում.

1) եթե հայտ ներկայացնելու օրվան նախորդող վերջին 2 տարվա ընթացքում հայտ ներկայացրած Կազմակերպիչը չի իրականացրել ՇՄԶ ծրագրեր, դասընթացներ,

2) եթե Կազմակերպիչը չի հանդիսանում կազմակերպվող միջոցառման ուղղվածության մասնագիտական տնտեսվարող սուբյեկտ, իսկ հայտին կից ներկայացված չէ միջոցառման ծրագրի վերաբերյալ համապատասխան ուղղվածության մասնագետի եզրակացությունը,

3) եթե Կոմիտեն միջոցառման ծրագրային նյութերի՝ սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար կարիք ունի մասնագիտական խորհրդատվության և եզրակացության:

## 4. Է-ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

18. Է-ուսուցմամբ Միջոցառումների կազմակերպումն իրականացվում է սույն հավելվածով սահմանված ընդհանուր հիմունքներով՝ հաշվի առնելով սույն կարգի 4-րդ գլխի դրույթները:

19. Է-ուսուցմամբ Միջոցառման կազմակերպման նպատակով ներկայացվում է հայտ՝ համաձայն Ձև N2-ի, որի օրինակը նախապես պետք է տեղադրված լինի Կոմիտեի www.minurban.am պաշտոնական կայքում: Մեկ հայտով դիտարկվում է միայն մեկ Է-ուսուցում: Հնարավոր է դիտարկել նաև խառը ուսուցման մոդուլ, որտեղ յուրաքանչյուր նյութի կրեդիտավորման համար անհրաժեշտ է ներկայացնել առանձին համապատասխան հայտ:

20. Սույն հավելվածի 5-րդ կետով սահմանված փաստաթղթերից բացի, Է-ուսուցման դեպքում ներկայացվում է հայտ՝ համաձայն Ձև N2-ի, որտեղ նշվում են՝

1) Կազմակերպչի (ների) անվանումը,

2) Է-ուսուցման անվանումը,

3) Է-ուսուցման հասանելիության աղբյուրը՝ նշելով ցանցային կայքը/հղումը,

4) Կոնտակտային անձի տվյալները (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլ. փոստ),

5) Է-ուսուցման բովանդակության և որակի համար պատասխանատու անձի (անձանց) տվյալները (անուն, ազգանուն, պաշտոն, հեռախոսահամար, էլ. փոստ),

6) ) դասավանդման համար կրեդիտներ ստանալու նպատակով դիմած դասավանդողների անուն ազգանունները,

7) թիրախային լսարանը, որի համար նախատեսված է Է-ուսուցումը՝ մասնագիտությունների և աշխատանքային ստաժի (անհրաժեշտության դեպքում) նշումով,

8) Ակնկալվող ՇՄԶ արդյունքը՝ գիտելիքի և հմտությունների նշումով, որոնք ձեռք կբերի Է-ուսուցումը հաջողությամբ ավարտած մասնակիցը,

9) Է-ուսուցման մշակման ժամկետը,

10) Է-ուսուցման կիրառման սկզբնաժամկետը և վերջնաժամկետը,

11)Է-ուսուցման բնույթը, որը կարող է լինել ձայնագրության, տեսագրության, տեսաձայնագրության, ընթերցման համար նախատեսված էլեկտրոնային նյութերի տեսքով (այլ նյութերի դեպքում հայտատուն կատարում է համապատասխան նշագրում),

12) Է-ուսուցման օգտագործման համար անհրաժեշտ տեխնիկական պահանջները,

13) Է-ուսուցման (է-ուսուցման մոդուլի) հետ աշխատանքի համար մասնակցին անհրաժեշտ օպտիմալ ժամանակահատվածը՝ ակնկալվող ՇՄԶ արդյունքներին հասնելու նպատակով,

14) Է-ուսուցման լեզուն(ները),

15) դասընթացի ֆինանսավորման աղբյուրները:

21. Հայտի հետ միասին ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) Է-ուսուցման հստակ և մատչելի նկարագիրը (docx ձևաչափով էլեկտրոնային տարբերակի առկայությունը պարտադիր է),

2) տեղեկատվություն Կազմակերպչի (ների) և Է-ուսուցման պատրաստման մեջ ներգրավված բոլոր կազմակերպությունների վերաբերյալ (հակիրճ բնութագիր),

3) Է-ուսուցումը պատրաստած և (կամ) հեռավար դասընթացը վարող մասնագետի (ների) ինքնակենսագրությունը (ները),

4) մասնակիցներին և Է-ուսուցումը պատրաստած և (կամ) հեռավար դասընթացը վարող մասնագետին (ներին) տրվող վկայականի ձևանմուշը՝ համաձայն Ձև N 4-ի,

5) Է-ուսուցման բովանդակության և որակի համար պատասխանատու անձի (անձանց) կողմից տրված եզրակացությունը,

6) Է-ուսուցումը պատրաստած, հեռավար կամ առցանց դասընթացը վարողի կողմից ներկայացվող շահերի բախման հայտարարագիրը (երը)՝ համաձայն Ձև N 3-ի:

22. Անհրաժեշտության դեպքում, բացի սույն հավելվածի 20-րդ կետով նախատեսված փաստաթղթերից, Կազմակերպիչը կարող է Կոմիտեին ներկայացնել նաև այլ ապացուցողական լրացնող փաստաթղթեր:

23. Հայտը կարող է պարունակել փաստաթղթեր, որոնք հաստատում են պատասխանատու մասնագետների և մյուս մասնակիցների տվյալների գաղտնիության պահպանումը, գիտական հետազոտությունների համապատասխանությունը էթիկայի կանոններին, անձնական տվյալների և հեղինակային իրավունքի պաշտպանությանը:

24. Է-ուսուցման բովանդակությունը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

1) ունենա ապացուցողական հենք, լինի քաղաքաշինական ժամանակակից մոտեցումներին համահունչ և պարունակի հղումներ համապատասխան գիտական հետազոտություններին (գիտական ամսագրում հրատարակման համար սահմանված չափանիշներին համապատասխան),

2) իրականացվի ակտիվ ուսուցման եղանակների կիրառմամբ,

3) պետք է ներառի ակնկալվող ՇՄԶ արդյունքների գնահատման միջոցներ: Վերջիններս պետք է համապատասխանեն Է-ուսուցման որակին, բովանդակությանը, ծավալին և բխեն Է-ուսուցման նյութից: Գնահատումը կարող է իրականացվել բազմակի ընտրությամբ պատասխաններով թեստի կամ ինքնագնահատման այլ եղանակի միջոցով: Ինքնագնահատման բաղադրիչին պետք է տրամադրվի յուրաքանչյուր ուսումնառության ժամից նվազագույնը 10 րոպե,

4) տրամադրվող կրթությունը չպետք է պարունակի գովազդի ցանկացած տեսակ, որոշակի շինարարական նյութի կամ մեթոդի արդյունավետության իրական ապացուցողական հենքի դեպքում այդ մասին տեղեկատվությունը կարող է ներկայացվել գիտական հրապարակումների համար ընդունված ձևով,

5) թույլատրելի է Է-ուսուցման վերջին 1 էջի սահմաններում հովանավորի հիշատակումը՝ տրամադրված աջակցության համար շնորհակալության հայտնումով,

6) քաղաքաշինական միջամտությունների և նյութերի անվանման միջազգային տերմինաբանության կիրառման տեսանկյունից հարմարեցված պետք է լինի միջազգային լսարանին:

25. Կազմակերպիչը պետք է ձեռնարկի միջոցներ Է-ուսուցման վերաբերյալ մասնակիցների հետ հետադարձ կապը ապահովելու համար: Կոմիտեին պետք է հասանելի լինի Կազմակերպչի հաշվետվությունը հետադարձ կապի արդյունքների և դրա վերաբերյալ իր արձագանքի մասին: Հետադարձ կապի հաշվետվությունը ներկայացվում է կրեդիտավորումից հետո 12 ամիսների ընթացքում:

26. Վճարովի կայքերին հղումները պետք է լինեն հստակ տարանջատված:

27. Կազմակերպիչը պետք է մասնակցի համար հասանելի դարձնի Է-ուսուցման հետ կապված տեխնիկական աջակցությունը:

## 5. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

28. Միջոցառման իրականացման համար պատասխանատու է Կազմակերպիչը, որն ապահովում է Միջոցառման անցկացումը հայտագրված վայրում, ժամկետներում և ներկայացված ծրագրին համապատասխան:

29. Միջազգային գիտակրթական Միջոցառումների ժամանակ Կազմակերպչի կողմից պետք է ընտրվի հաղորդակցության համապատասխան լեզու, կամ ապահովվի թարգմանություն լսարանի լեզվական կարիքներին համապատասխան:

30. Միջոցառման ժամանակ ներկայացվող ուսուցողական բոլոր նյութերը չպետք է պարունակեն գովազդի տարրեր և լինեն անկողմնակալ:

31. Եթե վարպետաց դասընթացների կամ գիտագործնական բաղադրիչ պարունակող Միջոցառման ժամանակ հովանավորչությունը կրում է նյութական բնույթ (օրինակ՝ շինարարական կամ նախագծային գործիքներ, սարքավորումներ և այլն), կազմակերպիչը ծրագրում ներառում է տեղեկատվություն մասնակիցների համար գոյություն ունեցող նմանատիպ այլ ապրանքատեսակների վերաբերյալ:

32. Կոմիտեի կողմից կարող է իրականացվել մշտադիտարկում Միջոցառման նյութերի, դրանց մատուցման եղանակների, սահմանված ՇՄԶ արդյունքների ձեռքբերման, դասավանդողի (ների) և այլնի վերաբերյալ մասնակիցների կարծիքը պարզելու նպատակով: Արդյունքները հաշվի են առնվում Միջոցառման հետագա գնահատման համար: Արդյունքներին ծանոթանալու հնարավորություն է տրվում նաև Կազմակերպչին: Մասնակիցների մեկ երրորդի բացասական արձագանքը դասավանդողի դասախոսական հմտությունների, մատուցվող նյութի մատչելիության կամ մատուցման եղանակների վերաբերյալ բավարար հիմք է հանդիսանում վերանայելու տվյալ Միջոցառման կրեդիտավորման հայտը:

33. Կրեդիտավորված Միջոցառմանը կարող են մասնակցել և կրեդիտներ ստանալ բոլոր մասնագետները՝ անկախ թիրախային լսարանում ընդգրկված լինելու հանգամանքից:

34. Կազմակերպիչը իրականացնում է Միջոցառման շրջանակներում մասնակիցների գիտելիքի ստուգման արդյունքների հավաքագրում և ներկայացնում է Կոմիտե Միջոցառման ավարտից հետո մեկամսյա ժամկետում:

35. Միջոցառման ավարտին մասնակիցներին և (կամ) դասավանդողներին տրամադրվում են Ձև N 4-ով հաստատված նմուշի վկայական:

**Հավելված 2**
**ՀՀ քաղաքաշինության**
**կոմիտեի նախագահի**
**2023 թ. փետրվարի 23-ի N 06-Ն**
**հրամանի**

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ԳԾՈՎ ՇՆՈՐՀՎՈՂ ՇՄԶ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇՆՈՐՀՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

### 1. ՇՄԶ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ԳԾՈՎ ՇՆՈՐՀՎՈՂ ՇՄԶ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

1. Սույն չափորոշիչները սահմանում են ՇՄԶ յուրաքանչյուր տեսակի գծով շնորհվող կրեդիտների քանակի և դրանց շնորհման հետ կապված հարաբերությունները:

2. ՇՄԶ կրեդիտները շնորհվում են ամբողջական թվերով՝ հետևյալ սկզբունքներով.

1) Միջոցառման 1 ժամը հավասար է 1 կրեդիտի: Ընդ որում, ծրագրային գնահատման արդյունքում ծրագրի որոշ մասեր կարող են չկրեդիտավորվել,

2) Միջոցառման 1 կրեդիտավորված ժամը կազմում է կրթական ակտիվության 60 րոպե,

3) Միջոցառման մեկ օրվա համար կարող է շնորհվել առավելագույնը 8 կրեդիտ,

4) մեկ տարվա ընթացքում իրականացվող նույնական Միջոցառումների համար դասավանդողը (ներ) կարող է կրեդիտներ ստանալ մեկ անգամ: Հնգամյա շրջափուլում նույնական Միջոցառումների շրջանակներում մասնակիցը կարող է կրեդիտներ ստանալ մեկ անգամ,

5) է-ուսուցման 1 ժամի (կրթական ակտիվության 60 րոպե) համար շնորհվում է 1 ինքնակրթության կրեդիտ: Յուրաքանչյուր հավելյալ 1 ամբողջական ժամին շնորհվում է 1 ինքնակրթության կրեդիտ,

6) մասնագիտական աշխատանքային ստաժի 1 տարվա համար շնորհվում է՝

ա. 1-ին կարգի մասնագետների համար ՝ 40 գործնական կրեդիտ.

բ. 2-րդ կարգի մասնագետների համար՝ 26 գործնական կրեդիտ.

գ. 3-րդ կարգի մասնագետների համար՝ 16 գործնական կրեդիտ:

3. Միջոցառմանը մասնակցության համար թիրախային լսարանում ընդգրկված մասնագետը կրեդիտ է ստանում Միջոցառմանը կամ դրա կրեդիտավորված բաժինների (եթե այդպիսիք առկա են) առնվազն 90 տոկոս մասնակցության դեպքում:

4. Միջոցառման և հեռավար կամ առցանց դասընթացների շրջանակներում դասավանդողը կրեդիտ է ստանում ըստ իր կողմից դասավանդվող ուսուցողական նյութի ծավալի (ուսուցողական նյութը պետք է կազմի ոչ պակաս, քան կրթական ակտիվության 60 րոպե):

5. Օրենքի 11.3-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված մասնագետների հավաստագրման համար անհրաժեշտ ՇՄԶ կրեդիտների նվազագույն քանակը հաշվարկվում է ըստ կրեդիտավորման հետևյալ ձևերի՝

1) տեսական կամ ինքնակրթություն.

2)գործնական կամ մասնագիտական աշխատանքային ստաժ.

6. Սույն հավելվածի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված ՇՄՁ կրեդիտների յուրաքանչյուր ձևերից որևէ մեկը մյուսի նկատմամբ գերակշիռ նշանակություն չունի՝ այն հաշվարկով, որ երկուսի վերջնագումարը առնվազն կազմի մասնագետների հավաստագրման համար անհրաժեշտ ՇՄՁ կրեդիտների նվազագույն քանակը:

7. 1-ին կարգի մասնագետը առավելագույնը 20 կրեդիտ, իսկ 2-րդ կարգի մասնագետը՝ 15 կրեդիտ կարող է հավաքել իրեն համապատասխան թիրախային լսարանում չընդգրկված քաղաքաշինության բնագավառի այլ մասնագիտական թեմաներից՝ իր ընտրությամբ:

8. Արտերկրում ստացած ՇՄՁ կրեդիտները, որոնք շնորհվել են տվյալ երկրի կրեդիտավորող մարմնի կողմից հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում ճանաչվում են «1 կրեդիտ հավասար է 1 կրեդիտ» սկզբունքով: Եթե ներկայացվող փաստաթղթերում Միջոցառման բնույթը սահմանված է որպես վարպետաց դաս կամ գործնական բնույթի այլ մասնագիտական դասընթաց կամ մասնագիտական աշխատանքային ստաժ, ապա գործում է «1 կրեդիտ հավասար է 1 գործնական կրեդիտ» սկզբունքը, եթե սահմանված է որպես առցանց կամ հեռավար դասընթաց, ապա գործում է «1 կրեդիտ հավասար է 1 ինքնակրթության կրեդիտ» սկզբունքը, իսկ այլ դեպքերում՝ «1 կրեդիտ հավասար է 1 տեսական կրեդիտ» սկզբունքը:

9. Արտերկրի համալսարանական լաբարատորիաներում, գիտահետազոտական կենտրոններում չկրեդիտավորված վերապատրաստման դասընթացին մասնակցության համար, եթե՝

1) դասընթացին մասնակցության համար նշված է ժամաքանակ (օրական կտրվածքով), ապա կրեդիտների հաշվարկը կատարվում է սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված սկզբունքների համաձայն,

2) դասընթացին մասնակցության համար չկա միջոցառման ժամաքանակի մասին տեղեկատվություն, ապա մեկ օրվա համար շնորհվում է 4 կրեդիտ:

10. Մինչև հավաստագրի տրված ժամկետի ավարտը նախորդ հաշվարկային հինգ տարիների ընթացքում պատասխանատու մասնագետին անհրաժեշտ պարտադիր կրեդիտների նվազագույն շեմը պետք է ապահովի և կազմի՝

| Հավաստագրման հավակնություն ունեցող մասնագետների դասային աստիճանները | անհրաժեշտ պարտադիր կրեդիտների նվազագույն շեմը | |
|---|---|---|
| | տեսական գիտելիքների զարգացում՝ մասնագիտական վերապատրաստումներից և Է-ուսուցումներից | գործնական հմտությունների զարգացում՝ համապատասխան մասնագիտական աշխատանքային ստաժից կամ գիտագործնական միջոցառումներից |
| 3-րդ կարգ | 50 կրեդիտ | 50 կրեդիտ |
| 2-րդ կարգ | 80 կրեդիտ | 80 կրեդիտ |

| | | |
|---|---|---|
| 1-ին կարգ | 120 կրեդիտ | 120 կրեդիտ |

11. Միջոցառման կրեդիտների քանակը որոշվում է ըստ վերապատրասման տեսակի, կարևորության և ժամկետի՝

1) տեսակը

| 10 կրեդիտ | 6 կրեդիտ | 4 կրեդիտ |
|---|---|---|
| Մասնագիտական գիտելիքների վերապատրաստում, որակավորման բարձրացում, կատարելագործում | Մասնակցություն համաժողովներին, սեմինարներին, գիտաժողովներին | Ուսումնական այցեր |

2) կարևորությունը

| 10 կրեդիտ | 8 կրեդիտ | 6 կրեդիտ |
|---|---|---|
| Պետական կարևորություն ունեցող խնդիրների լուծման, միջպետական հարաբերությունների հաստատման և ամրապնդման նպատակ հետապնդող միջոցառումներ | Քաղաքաշինության բնագավառի ընդհանուր խնդիրներին և գործառույթներին վերաբերող միջոցառումներ | Հավաստագրման ենթակա մասնագիտության բնութագրից բխող գործառույթների կատարելագործման միջոցառումներ |

3) ժամկետը

| 22 կրեդիտ | 16 կրեդիտ | 8 կրեդիտ |
|---|---|---|
| 3 – 6 ամիս | 1 - 3 ամիս | մինչև 1 ամիս Ոչ ծավալուն՝ մինչև 20 էջ կամ մինչև 8 կրթական ակտիվության ժամ |

**Օրինակ.** Միջոցառման երկու շաբաթ տևողությամբ (8), հավաստագրման ենթակա մասնագիտության բնութագրից բխող (6), ուսումնական այցը (4) հաշվարկվում է 18 կրեդիտ:

12. Բացի սույն հրամանի հավելված 1-ով սահմանված կրեդիտավորման ենթակա Միջոցառումներից Կոմիտեն ճանաչում է նաև ՇՄՁ շրջանակներում կրեդիտավորման ենթակա գործունեության հետևյալ տեսակները՝

1) թեկնածուական ատենախոսության պաշտպանում և հաստատում ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ **ԲՈԿ**) կողմից, որի համար շնորհվում է 180 ինքնակրթության կրեդիտ,

2) ԲՈԿ-ի կողմից հաստատված թեկնածուական ատենախոսության ղեկավարում, որի համար շնորհվում է 60 ինքնակրթության կրեդիտ,

3) դոկտորական ատենախոսության պաշտպանում և հաստատում ԲՈԿ-ի կողմից, որի համար շնորհվում է 220 ինքնակրթության կրեդիտ,

4) ԲՈԿ-ի կողմից հաստատված դոկտորական ատենախոսության խորհրդատու հանդիսանալը, որի համար շնորհվում է 40 ինքնակրթության կրեդիտ,

5) դասագրքի (հաստատված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից) հրատարակում, որի համար շնորհվում է 120 ինքնակրթության կրեդիտ,

6) մենագրության հրատարակում, որի համար շնորհվում է 120 ինքնակրթության կրեդիտ,

7) Օրենքով սահմանված կարդով հաստատված՝ քաղաքաշինության գործունեության տեսակի գործելակարգի մշակում կամ ազգային զեկույցի հրատարակում, որի դեպքում շնորհվում է 12 ինքնակրթության կրեդիտ,

8) Օրենքով սահմանված կարգով հաստատված՝ քաղաքաշինության բնագավառում իրականացվող աշխատանքների մեթոդական ցուցում, որի համար շնորհվում է 20 ինքնակրթության կրեդիտ,

9) ուսումնական ձեռնարկի (հաստատված գիտամեթոդական միավորման կողմից) հրատարակում, որի համար շնորհվում է 20 ինքնակրթության կրեդիտ,

10) գիտական հոդվածի հրատարակում ԲՈԿ-ի կողմից ընդունելի հանդեսներում/ամսագրերում: Գիտական հոդվածի հրատարակման համար շնորհվող կրեդիտները հաշվարկվում են ըստ հանդեսի/ամսագրի ազդեցության գործակցի: 1 (մեկ) հոդվածի համար տրամադրվող ինքնակրթության կրեդիտների քանակը հետևյալն է՝

| Ամսագրի ազդեցության գործակից | | Կրեդիտների թվաքանակ |
|---|---|---|
| ա. | Ոչ մի | 6 կրեդիտ |
| բ. | Մինչև 3 | 12 կրեդիտ |
| գ. | Մինչև 6 | 24 կրեդիտ |
| դ. | Ավելի քան 6 | 36 կրեդիտ |

11) միջազգային գիտաժողովների շրջանակներում հրատարակված թեզիս, որի համար շնորհվում է 1 ինքնակրթության կրեդիտ:

13. Մինչ սույն չափորոշիչները հաստատելը լիցենզիաների ներդիրներում ընդգրկված մասնագետները Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված քաղաքաշինական գործունեության տեսակներին և ենթատեսակներին համապատասխան կարող են կրեդիտավորվել և ստանալ Օրենքի 11.1-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով սահմանված

մասնագիտական կարգ՝ նախկինում համապատասխան ռիսկայնության օբյեկտներում մասնագիտական գործունեության փորձի առկայության դեպքում:

Շնորհված կրեդիտները 5 տարվա կտրվածքով կապահովեն Օրենքի 11.3-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված նվազագույն կրեդիտների շեմը:

